1
LGn
715-718, 2347

19 99

ՑԱՐՈՒԹԻՒՆ
ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՄԵԼԻՔ-ԻՍՈՒՓ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՕԷՄԱ

(1728—1750)

(Արտատպած „ԼՈՒՍԱՒՈՐ“ հանդիսից).

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Շարաձէ եւ Ընկ., Նիկ. 21.
1900

Կպք. 3.ա

L 6n
2347

Дозволено цензурою, Тифлисъ, 1-го Іюня 1900 года.

29 719 2347-97

ՄԵԼԻՔ-ԻՍՈՒՓ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՈԷՄ

(1728—1750)

I

Այն ժամանակ մեր որբ ազգն անտէր
Դեռ չէր վայելում խընամքը Կայսեր.
Հզօր Ռուսիայի Արծիւն արքունի
Դեռ չէր տարածել բարձունքից անհուն
Իր ազատարար, իր կարող թեւեր
Եւ պատսպարել մեր դաշտ ու լեռներ[1]).
Դեռ մեր հալածուած ազգը ցիրուցան
Ի՛նքն էր զէնքով պաշտպանում իրան,
Երբ յանկարծ մեաւ քաջ Մելիք-Աբով[2]),
Թնդացրեց աշխարհ հայերի ոդբով։

II

Մահուան մահիճում իշխանն անզօր
Կանչեց իրա մօտ իր Թամրազ եղբօր։

Վարչութեան ղեկը յանձնելով նորան,
Պետ նշանակեց իր մելիքութեան.
Կըտակեց, որ նա լինի խնամատար,
Պահի, պաշտպանի Գիւլիստան աշխարհ,
Որ հովիւ լինի իր հայրենիքին
Եւ իշխանական որբ ընտանիքին,
Մինչև որ Իսուսի որդին մեծանայ,
Ժառանգի իր հօր ու մելիք դառնայ։

III

Իսկ իր պատանի միակ ժառանգին
Արոմն համբուրեց օրհասի ժամին,
Եւ տալով նորան սաղափով նախշած,
Արծաթի օղերով հրացանը, ասաց.
«Ահա, սա այն է, որով Կաղ-Արով [3])
Պահեց Գիւլիստան աղատ, ապահով.
Սա այն զէնքն է ահեղ, մահաբեր,
Որից սոսկացին մեր թշնամիներ,
Որը պաշտպանեց մեր եկեղեցին
Եւ փառք ու պարծանք վաստակեց հային։

IV

«Արիւնհեղութեան ոսպէին դաժան՝
Սա ինձ եղել է ընկեր անբաժան.

Աչքիս լոյսի պէս՝ սիրել եմ, խնամել,
Իմ հողի նման՝ սիրել, պաշտպանել.
Առ, ուսդդ գցիր, սիրելի դաւակ,
Պահիր, պահպանիր հօրդդ յիշատակ.
Անարատ է սա, սուրբ, անապական.
Փոքրոգութեամբ մի գուցէ սորան
Թուրքերի առաջ պղծես, անարգես,
Քո հօր աւանդը արատաւորես!..

V

«Զունչդ բերանիդ եթէ այս զէնքը [4])
Մատնես դարշելի ոսոխի ձեռքը,
Այնժամ սառ հողի կուրծքը կը ճեղքեմ,
Ձիրմիս խորքերից անէծք կը թափեմ
Ստոր, անարժան ժառանգիս գլխին.
Անէծքս ահեղ՝ հասնելով երկին՝
Ձանթեր կը թափի բարձունքից անհուն,
Բնաջինջ կ'անի իմ անարգ որդուն!..»
Արովը, տալով հրաժեշտը վերջին,
Աչքերը փակեց, աւանդեց հոգին։

VI

Եւ կամարակապ պալատը յանկարծ
Հառաչ ու ողբով թնդաց, դղրդաց..

Լալիս էր Իսուսի, լալիս էր այրին,
Ազգ ու ազգական ողջ լալիս էին.
Սուգը ընդհանուր բարձրանում էր վեր,
Ճարժում, տատանում Հռոմեկայ լեռներ.
Զօրք ու զօրապետ տխուր, վշտաբեկ՝
Գործքը Սրովի յիշելով մէկ-մէկ,
«Ողորմի» էին տալիս մելիքին,
Հեկեկում անվերջ, լալիս դառնապին։

VII

Եւ ժողովուրդն ողջ Գիւլիստանի,
Սգալով մահն հզօր իշխանի,
Համբուրեց սառած նորա այն աջը,
Որով պահում էր, պաշտպանում բաջը
Մեր եկեղեցին զազիր թուրքերից,
Մեր սուրբ երկիրը չար փորձանքներից։
Եւ քառասուն օր՝ գիշեր ու ցերեկ՝
Ազգը լալիս էր դառը, վշտաբեկ.
Ամբողջ մի տարի լեռների լանջում
Ոչ նրւագարան, ոչ երգ էր հնչում։

VIII

Երկինքը յուղուած՝ որպէս հրեղէն ծով՝
Վաղ առաւօտեան բռընկուեց բոցով.

Լեռան կատարից բընուլթեան արքան
Իր պայծառ ցոլքը թափեց Գիւլիստան.
Բարձր գմբէթը Հռոմեկայ վանքի
Եւ կամարները վեհ ապարանքի
Արեգի շողից ոսկեզօծուեցան.
Ասուն, անասուն քնից արթնացան.
Գալար անտառի նախշուն հաւքերը
Սկսան իրանց անուշ երգերը։

IX

Իսկ Մելիք-Թամրազ իր ապարանքում,
Նստած սիւնագարդ, շքեղ սրբահում,
Իր առաւօտեան ճաշը վայելած՝
Ղայլան էր ծխում։ Ձեռները խաչած,
Գօտկի մէջ խրած ոսկէ ունելիք,
Կանգնած էր հեռու մի հեղ մանկլաւիկ.
Ղայլանը հէնց որ հանգչում էր, մարում—
Իշխանի համար կրակ էր բերում.
Եւ ոլոր-մոլոր կապոյտ բուլաներ
Բարձրանում էին, գնում դէպի վեր։

X

Տխրութեան մռայլ ամպը ճակատին՝
Նայում էր անթարթ Թամրազ յատակին.

Խոհերը ծանր, ծանր ու դաժան
Կեղեքում էին և տանջում նորան։
Եղբօր մահը էր նա արդեօք յիշում
Եւ ինքն իրան մորմոքւում, ցաւում.
Թէ հայրենիքի հոգսերը էին
Պաշարել նորա սիրտն ու հոգին.
Գուցէ վտանգ էր հային ըսպառնում,
Կամ մի չար համբաւ նորան ջլատում...

XI

Ոչ!.. Այդ Իսուսին էր, Իսուսը հզօր,
Որ վրդովում էր, տանջում հօրեղբօր.
Իսուսին աճում էր, Իսուսի մեծանում—
Ժամը հասնում էր, ժամը մօտենում,
Երբ Թամրազ պիտի յանձնի ժառանգին
Վարչութեան դեկը, իսկ ինքը նախկին
Իր փառքից զրկուէ, զրկուէ անունից
Եւ հրաժարուէ իր իշխանութիւնից...
Ա՜խ ինչու, ինչու Թամրազ յաւիտեան
Չը մընայ մելիք, չը մընայ իշխան...

XII

Երկնակամարում՝ գիշերուայ կիսին՝
Ամպերի միջին լողում էր լուսին.

Ձողքերըն ոսկոտ թափել էր նա ցած,
Նայում աշխարհին դէմքով տխրամած։
Ամեն ինչ լուռ էր, ամեն տեղ խաղաղ.
Հանգիստ քնած էր ամբողջ Ղարաբաղ։
Բայց Գիւլիստանի բերդում՝ դեռ անքուն՝
Նստած էր Ղամար Սուլթանը զարթուն,
Նստած նայում էր քնած զաւակին,
Հոգով անձնատուր դառը վշտերին։

XIII

Ամուսնու մահուան ցաւ ու կսկիծը
Դեռ չէր փարատուել նորա սրտիցը,
Երբ նենգ, ընչաքաղց Թամրազը դաժան՝
Ձլացած փառքով մշտընջենական՝
Ցափըշտակել էր, կողոպտել եղբօր
Գոյքը սեփական, բարիքը բոլոր,
Հալածանքների մատնել Իսուսին,
Հարստահարում, ընկրճում որբին։
Իսուսի կեանքը Թամրազի համար
Անտանելի էր, դառնագէն խոպառ։

XIV

Պէտք է վերջ դնի Թամրազ այդ կեանքին,
Պէտք է չքացնի Թամրազ ժառանգին!..

Հա՛, մի պայծառ օր՝ դաշտում կամ սարում,
Կամ թէ գիշերով՝ Գիւլիստան քերդում՝
Թամբաղը ծածուկ կը սպանի որբին
Եւ դին կը ձգի անդունդը մթին.
Կամ թէ կը խարի, կը տանի ձորը
Եւ իր կէռ թուրը կը խրի փորը...
Գաղանիքըն ահեղ կը մընայ գաղտնիք,
Թամբաղն էլ առ միշտ կը մընայ մելիք։

XV

Բայց Ղամար Սուլթան՝ հովուի տէս արթուն՝
Գիշեր ու ցերեկ հսկում էր որդուն.
Անգութ Թամբաղի սիրտը նենգաւոր
Կարդում էր հեռուից այրին սգաւոր,
Կարդում էր հեռուից—սոսկում, սարսափում,
Մռայլ մտքերից տանջւում, կեղեքւում...
Իսմէին էր միայն մօր վերջին յոյսը,
Հանգած օջախի ապագայ լոյսը.
Իր մօր աչքերից նա պիտի սրբէր
Նորա յորդառատ, աղի արցունքներ...

XVI

Եւ այրիացած հէգ Ղամար Սուլթան
Դառը լալիս էր անտէր, անպաշտպան.

Ողբում էր իր քաջ ամուսնու մահը,
Ողբում իր ազգի խաւարած ջահը.
Արիւնոտ վէրք էր բացուել կրծքի մէջ,
Վէրքը ցաւում էր, մրմնջում անվերջ,
Բայց ոչ մի դարման, ոչ մի դեղ չը կար,
Որ բուժէր շուտով կուրծքը ցաւագար.
Նա տաշորւում էր, վայում ու լալիս,
Անցած օրերին երանի տալիս։

XVII

Այրին դառնացած, տխուր, վշտաբեկ,
Յիշում էր անցած օրերը մէկ մէկ.
Յիշում էր նա իր դեռները կուսական,
Երբ դեռ ապրում էր տանը հայրական.
Օ՜, այնժամ ջահէլ Սուլթանը Ղամար՝
Ձիեղ զարնան պէս՝ զրարթ էր, կայտառ,
Չունէր ոչ մի հոգ, չունէր ոչ մի դարդ—
Թպտում էր ուրախ, իբրև զարնան վարդ...
Միակ աղջիկն էր հարուստ, անուանի
Միրզա-Մահմադ-Մուստաֆա-Խանի։

XVIII

Այնժամ Քրիստոսի Հաւատը պայծառ
Ղամարի սրտին օտար էր իսպառ.

Բայց երբ նա մի օր լեռների լանջում՝
Հօր խաշների մօտ ճեմում էր, շրջում—
Քաջ Մելիք-Աբով, տեսնելով հեռուից,
Հմայուած կոյսի գոհար աչերից,
Ցանկարծ սլացաւ՝ արծվի նման՝
Եւ յափշտակեց Թուրքի աղջկան.
Տարաւ Գիւլիստան, վանրում [5]) մկրտեց,
Սուրբ եկեղեցում հետը պսակուեց...

XIX

Այդ հերոսութեան, քաջութեան համար
Սիրեց մելիքին սնաշեայ Ղամար.
Իր բոլոր հոգով նա այն օրուանից
Միացաւ հայի Հաւատին անբիծ.
Իր քաջ ամուսնուն անհնատուր եղած,
Հայ ժողովրդից յարգուած ու պաշտուած,
Երկար տարիներ իր ապարանքում
Անհոգ ու զբաղթ կեանք էր վայելում.
Բայց երազի պէս՝ անցան, գնացին
Այն երանաւէտ օրերը նախկին...

XX

Բարձր, սեպացած ժայռի կատարին,
Սառնորակ ու վեհ Ինջայի ափին,

Կանգնած էր տխուր, սակայն ահաւոր,
Գիւլիստան երկրի բերդը սգաւոր։
Իսկ այնտեղ հեռու, շքեղ պալատում,
Խրախճանքի ուրախ աղմուկ էր հնչում.
Թմբուկ ու փողեր, երգ ու կատակներ
Թնդացնում էին շրջակայ լեռներ...
Լսում էր հեռուից ամբոխը յուզուած,
Խոր հոգւոց հանում, դառնութեամբ լցուած։

XXI

Թամրաղն այնտեղ հանդէս էր սարքել,
Թուրք հարկահանին ճաշի հրաւիրել։
Դեռ մինչև այնօր Գիւլիստան աշխարհ
Հարկ չէր վճարել Թուրքերին խպառ.
Արձակ-համարձակ, սուրբն իր ձեռքին՝
Քարդել էր, վանել հայը պարսկին.
Դեռ Կաղ-Աբովի հողում սրբազան
Ոտքը չէր դրել ոչ մի հարկահան,
Անյաղթ, անկուն՝ քաջն անվեհեր
Պաշտպանել էր միշտ իր դաշտ ու լեռներ։

XXII

Իսկ այսօր... Այսօր Թամրաղը դաժան,
Մայրենի հողի տէրն անարժան,

Եղբօր յիշատակն ոտնատակ տուած՝
Ընդունել է նենգ թուրքին գրկաբաց,
Նորա պատիւն սաղքել մեծ հանդէս,
Նորա առաջին սողում՝ որդնի պէս.
Թամրազն այսօր ծաղրի է մատնում
Հայի անունը, նորան անարգում.
Ազգի քրտինքով վաստակած ոսկին
Տալիս է այսօր թշնամի թուրքին։

XXIII

Թամրազն այսօր, շողորդելով,
Պարսից արքայի ծառայի գլխով
Թիֆլեզի նման՝ պտոյտ է գալիս,
Նորան մեծարում ու պատիւ տալիս...
Ուզում էր Թամրազ լպիրշ ոսոխին
Իր կողմը բաշել, գրաւել պարսկին—
Նորա օգնութեամբ մնալ միշտ մելիք,
Թէկուզ կործանուի բոլոր հայրենիք.
Թամրազն այսօր՝ դիւթուած իր փառքով
Ճոյում էր թուրքին ազգի բարիքով։

XXIV

Պարսից հարկահանն ոսկով շլացած,
Գովեց Թամրազին, գովեց և ասաց.

«Մաշալլա, Թամրազ. դեռ ոչ մի մելիք
Չի տուել երբէք մեզ այսքան բարիք.
Այ, հաղալ լինի քո կերած հացը,
Ալլահն օրհնի քո ծծած կաթը!
Հզօր, ողորմած խնամքը շահի
Պաշտօնիդ միջին քեզ հաստատ պահի!
Մեծ Փէյղամբարը կեանք տայ մեր շահին,
Որ խոնարհ լինես դու նորա դահին...»

XXV

Թամրազ խոստացաւ՝ մինչև իր մահը
Պաշտել սրբութեամբ Պարսկական գահը,
Լինել հլնազանդ, լինել միշտ հլու,
Մնալ յաւիտեան ծառայ, հարկատու։
Եւ կամենալով հիւրին նենգաւոր
Նուիրել ընծայ մի արժանաւոր,
Մելիքը լպիրշ, ատոր, շողորդելով,
Ազգի անարժան որդին թուլամորթ
Չար, դժոխային ժպիտը բերնին՝
Քծնելով ասաց թուրք հարկահանին.

XXVI

«Մեռնելուց առաջ՝ իմ եղբայր Աբով,
Որ ձեզ ատում էր իր բոլոր հոգով,

ԼԵՌ
ԲԱՆԱՐԱՆ

Ցանձնեց իր որդուն մի Ղրիմի հրացան,
Հրացանն եմ ասում... հաղուագլուխ մի բան...
Կոթը սաղափով զարդարած նախշուն,
Ինքը պողպատից, ամուր ու փայլուն.
Օղերը արծաթ, մէջը ոսկորակ.
Իսկ նորա ահեղ, մահաբեր գնդակ
Զարկում է անվրէպ իր նպատակին,
Ծակում է լեռներ, սլանում երկին...

XXVII

«Օակայն ափսոս, որ այդ անգին զէնքը
Տուել են անմիտ երեխի ձեռքը...
Նա լաւ կը սազի քաջագօր շահին,
Կամ նորա զերարդ մեծ հարկահանին...
Եթէ կամենամ՝ կարող ես կանչել
Իւսուփին քեզ մօտ ու ձեռքից խլել.
Իսկ թէ յանդգնի խօսել հակառակ,
Այնժամ երեսին մի փափուկ ապտակ...
Նա էլ՝ իր հօր պէս՝ զոռոզ է, յամառ,
Զէնիւ թուրքերիդ ատում է խսպառ...»

XXVIII

Արդէն կատարուեց... յափշտակեցէ՛ն...
Զէնքը նուիրական խլեց թշնամին.

Այն սուրբ, հայրական աւանդքն անբիծ
Խլեց թշնամին ժառանգի ձեռքից.
Խլեց թշնամին, առանց յաղթութեան
Առանց արիւնի, առանց քաջութեան...
Երկինքը մթնեց Իւսուփի դլխին,
Աշխարհ սևացաւ, խաւարեց շորս դին...
Իւսուփ ողբաձայն լալիս է գոչում,
Զահել վագրի պէս՝ շուրջը թնդացնում...

XXIX

Զրկուեց հայրական ժառանգութիւնից,
Զրկուեց իր սիրած, փայփայած զէնքից.
Ամեն օր նորան նա իւղ էր քսում,
Խնամքով խոտակում, մաքրում, պաշտպանում,
Որ երբ մեծանայ, դառնայ մեծ իշխան —
Իսպառ տապալի Թամրազին դաժան
Եւ սրբանըւէր հզօր այն զէնքով
Ազգը պահպանի թուրքից ապահով...
Այժմ ի՞նչ անի Իւսուփ անպաշտպան.
Ո՞ւմ մօտ նա գտնի արդար դատաստան...

XXX

Եւ նա յուսահատ, մռայլ ու տրտում,
Արցունքն աչքին, կսկիծը սրտում՝

ՀԱՅԱՍՏԱՆ

Եկաւ սպասոր բերդը Գիւլիստան,
Նետուեց խանդավառ գիրկը մայրական,
Որ առժամ հանգիստ առնի մօր կրծքին,
Տայ թեթեւութիւն իր սրտի վէրքին.
Որ մայրը որդու սիրտին ամոքի,
Իր բուռն սիրով նորան ըսփոփի,
Որ նա գիւլիական խօսքով իր հոգը
Բուժի հէգ որդու կուրծքը վիրաւոր...

XXXI

Բայց Ղամար Սուլթան դաժան, զայրացած՝
Հրրեց Իսուսին, գոչեց կատաղած.
«Հեռո՛ւ ինձանից, հեռո՛ւ, դու ըսոսոր,
Անարդ, անարժա՛ն որդի դու քաջ հօր...
Լաւ էր, որ եղէ բերէին ինձ մօտ
Անզգայ, անշունչ քո դին արիւնոտ
Եւ ինձ ասէին՝ մեռաւ քո որդին,
Հօր նրբրական աւանդը ձեռքին...
Գնա, հեռացիր, դարշելի էակ,
Էլ այսուհետև ես չ'ունեմ զաւակ...»

XXXII

Այն ով է նստած շիրմի առաջին
Ու կէս գիշերին լալիս դառնագին.

Այն ով է սգում, անվերջ հեծկլտում
Եւ գերեզմանի հանգիստը խախտում.
Այն ով է թերել գլուխը յոգնած
Այն սառը քարին, սպրում վշտացած...
Նա Իսսուին է հէգ, Իսսուիը թշուառ,
Արտաքսուած մօրից, հալածուած խպառ...
Բայց տապանի մօտ ինչու՞ էր ողբում
Գիշերուայ կիսին—ինքն էլ չէր գիտում...

XXXIII

Բարձր ուռենու ճիւղերի միջից
Ցողը թափել էր լուսինը վերից,
Նախշել Աբովի սառը գերեզման։
Լուռ էր Հոռեկայ տխուր մենաստան։
Տանջւում էր Իսուսի դառը վշտերից,
Տանջւում էր մռայլ, դաժան մտքերից...
Կարծես՝ հնչում էր նորա ականջին
Հայրական ահեղ անէծքն ուժգին.
Կարծես՝ մամռապատ հողը ճեղքելով,
Իր գերեզմանից ելնում էր Աբով...

XXXIV

Ահա նա, ահա... Նա ուռենու տակ
Կանգնած է ահեղ, ահեղ, դժնդակ...

Կանգնած է, ծածկուած ճերմակ պատանքով,
Եւ նայում անթարթ, խոժոռ հայեացքով...
Սոսկում է Իսուսի և դողում ահից...
Արդեօք ո՞ւր փախչի ահեղ տեսիլքից...
Նա հետևում է՝ անէծքը բերնին,
Նա մօտենում է ահա զայրագին,
Կարծես՝ ոսկրացած ձեռներով դաժան
Ուզում է խեղդել որդուն անարժան...

XXXV

«Ա՜հ... խնայիր ինձ, հայր... Ներիր անարգուած,
Սո՞ր, զարշելի՞ որդուդ հալածուած...
Քո սուրբ պատուէրը տուի ոտնատակ,
Թողի անկատար քո վերջին կտակ...
Սառ հողում թաղուած փառքիդ անարատ
Անարգանք թափեց որդիդ հարազատ...
Բայց ների՛ր ինձ, հայր... Արեամբս կարմիր
Կը լսամ իմ սև ամօթը զազիր...»
Ահեղ ուրուականն յանկարծ չքացաւ։
Այդը բացւում էր։ Իսուսի հեռացաւ։

XXXVI

Եւ ահա Իսուսի՝ արցունքըն աչքին՝
Եկաւ-ու կանգնեց իր մօր առաջին.

«Մայրիկ, արտաքսուած որդիդ անարժան
Քեզ չի ազերսում, որ ներես նորան—
Նա չէ արժանի որդիդ կոչուելու,
Չունի իրաւունք կրծրիդ փարուելու։
Դիմում է նա քեզ, իբրև մի զինուոր,
Խնդրում է նա քեզ, իբրև ազգի մօր,
Որ տաս նորան զէնք դնայ, մաքառի,
Իր հօր կորուսած փառքը յետ բերի...»

XXXVII

Եւ մօր կեղերուած սրտից ցաւագար
Կարծես՝ գլորուեց մի ծանր լեռ բար.
Ցուսոյ առաջին նշոյլը փայլեց
Այրին յուզուեցաւ, կուրծքը բաբախեց...
Էլ նորա առաջ նախկին լծոյլ, անզօր
Իսուսի չէր կանգնած—այլ մի ահաւոր
Կորիւն քաջարի, որի աչքերում
Առիւծ Սրովի ոգին էր փայլում.
Իբրև մարմնացած անվեհերութիւն,
Նա զէնք էր խնդրում թափելու արիւն։

XXXVIII

Բայց Զամար Սուլթանն էլ ոչինչ չ'ունէր—
Որդու համար զէնք սրտերից ճարէր։

Թամրազն ազատ, դաժան, նենգաւոր
Խլել էր արդէն բարիքը բոլոր.
Յափշտակելով եղբօր կալուածքներ
Եւ կողոպտելով նորա տան գոյքեր,
Հէգ իշխանուհուն թողել էր ապրատ,
Ամեն բանից զուրկ, գուրկ և յուսահատ։
Նայեց Իւսուֆին Զամարը թշուառ,
Նայեց այլայլուած, յուզուած ու շլար...

XXXIX

Եւ ձեռքն յանկարծ տարաւ դէպի վեր,
Պոկեց ճակատից իր ոսկէ շարքեր,
Եւ իշխանական զարդը թանկագին՝
Վեհ ու մեծապանծ՝ շպրտեց գետին.
«Այս է մնացել.. ա՛մբ, իմ որբ դաւակ,
Տա՛ր իմ այս վերջին բարիքը միակ,
Տա՛ր, զէնքեր գնէր, կու�իր անվեհեր,
Հօրդ կուրուսած աւանդը յետ բեր,
Օջակս աւեր կրկին նորոգիր,
Քո հօր տան հանգած ճրագը վառիր...»

XL

Միւս առաւօտեան արեւը պայծառ
Երբ ցոլքը ոսկէ թափել էր աշխարհ,—

Ապարանքի մօտ, ջրիքը բարձած
Ոսկով-արծաթով, նժոյգը հեծած՝
Կանգնած էր պատրաստ թուրք հարիւանը,
Ուսին Արովի սուրբ հրրայանը.
Թամրազը՝ կանգնած բազդը ժպիտով
Եւ շրջապատուած իւրայիններով
Առաջ ու փառաջ ճանապարհ էր գցում
Թանկագին հիւրին, բարի երթ մաղթում։

XLI

Հրաժեշտը վերջին տալով Թամրազին,
Իր նոքարների խմբով միասին
Հարիւանն իր ժողուած հարիւրով
Ընկաւ ճանապարհ լեռան լանջերով,
Բարձր, սեպացած ժայռի կատարից
Մռայլ ամրոցի պատի բարձունքից,
Նայում էին լուռ աշտարակները,
Նայում դէպի այն հեռու լեռները,
Ուր անյայտացաւ թշնամին անհետ,
Տանելով հայի պատիւը իր հետ։

XLII

Մռայլ, ահաւոր ձորի խորքերում
Թարթարը անվերջ թնդում է, գոչում

Հսկայ վիշապի նման կատաղած՝
Առաջ է վազում յուզուած, փրփրած։
Առաջ է վազում նա գալարուելով,
Գետնի ապառաժ կուրծքը ճեղքելով։
Գոչում է ուժգին, բարձր մռնչում,
Եւ ահեղ ձայնով շուրջը թմբացնում։
Ափերը լեռնոտ շարժում է տեղից,
Ժայռերը ծեծում, քերում ներքևից։

XLIII

Դաժան ափերից ճնշուած ու նեղուած՝
Բողոք է բառնում գետը զայրացած։
Բայց այնտեղ ահա ծառերը դալար
Երկու ափերից կազմել են կամար
Եւ, խոնարհուելով Թարթարի վերայ,
Յորդոր են կարդում, որ նա մեղմանայ։
Արևն էլ ոսկէ շողքերը վերից
Թափել էր ներքև ճիւղերի միջից,
Ջուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ յուզւում էր, գոչում։

XLIV

Եւ անվնդախոր ձորի եզերքին,
Ուր ամբառնում են ծառերը երկին,

Նեղ, օձապտոյտ շաւղի վերայով
Մի կարաւան էր ընթանում ահով։
Եւ ձորը բացած ահեղ բերանը,
Ուզում էր կուլ տալ ողջ կարաւանը։
Մի թեթև շարժում, անզգոյշ մի քայլ —
Նա կը գլորուի անդունդը մռայլ։
Այնտեղ վրիժառու, յուզուած, զայրագին՝
Թարթարը կատաղած սպասում է զոհին։

XLV

Ականջ դնելով գետին վերևից՝
Կարաւանը լուռ անցնում էր ձորից։
Թիւլիստանից էր նա վերադառնում,
Պարսից արքայի մօտ էր նա գնում։
Հայ գաւառներից հաւաքած ոսկին
Տանում էր իր հետ, որ յանձնի շահին։
Տանում էր իր հետ հայի քրտինքը,
Հայից կողոպտած զէնքն ու բարիքը,
Բայց Հայոց երկրի ընուիթեան ծոցում
Այժմ մի տեսակ սարսուռ էր ըզգում...

XLVI

Եւ ահա ձորի բարձր եզերքին,
Կապոյտ երկնքի կամարի տակին,

Իբրև մի արծիւ՝ յանկարծ երկաց
Աբովի որդին ըսպառազինուած...
Քաջ ու անվեհեր նա ձայնեց [6]) վերից —
Եւ ահա յանկարծ թիւերի տակից
Հայոց հրացաններն ուժգին թնդացին
Ծխի քուլաներն երկինք վերացրին.
Կռիւն ահեղ խսկոյն բորբոքուեց...
Սոսկաց թշնամին... Տաղնապը տիրեց...

XLVII

Եւ դիակներն՝ արիւնով շաղուած
Գլորուում էին ձորից դէպի ցած,
Անհետ չքանում անդունդի խորքում...
Վերից մահաբեր գնդակ էր տեղում.
Ձիեր և ջորիք ահ ու սարսափով
Վազվզում էին զառիվերներով.
Ցածում Թարխանն էր մոլեգնած գոչում, —
Վերև ահարկու մարտն էր եռում.
Շուրջը լցուում էր ահով ու մահով,
Գաղանը ներկուում թուրքի արիւնով...

XLVIII

Ահա, հարկահանն այնտեղ զարհուրած՝
Ուզում է փախչել, մահից սարսափած.

Բայց Իսուսի՝ ճարպիկ եղնիկի նման՝
Վազում է վերից՝ կտրիճ, անսասան.
Ժայռի կատարից նա թուրը ձեռին
Ահա թռաւ ցած և հասաւ թուրքին...
Թուրը շողշողաց պայծառ արևից,
Խրուեց թշնամու կուրծքը չարալից...
Արիւնը ցայտեց քաջի երեսին...
Թուրքը մռնչաց, աւանդեց հոգին...

XLIX

Տաղնապն անցաւ։ Հօր սրբանուէր
Աւանդը փրկեց որդին անվեհեր։
Զինակիցները ահա ժողուեցին,
Շրջապատեցին ջահել Իսուսին,
Մէկ-մէկ պագեցին գէնքը սրբազան,
Երգեցին իրանց երգը յաղթական։
Եւ երբ թեքուեցաւ պայծառ արևը
Մտաւ Թարխանի ձորի յետևը —
Թշնամուց խլած բարիքն առան,
Ճանապարհ ընկան դէպի Գիւլիստան։

L

Ղամարը երկմիտ և աչքը ճամբին
Դեռ ըսպասում էր։ Եւ յանկարծ որդին,

Շրջապատուած իր քաջ ընկերներով,
Ամբոցը մտաւ յաղթական դէմքով,
Մի ձեռքին թուրքի գլուխը էր բռնած,
Միւս ձեռքին իր հօր աւանդը փրկուած...
Մայրը սրտատրոփ գրկեց Իսուփին,
Խելագարի պէս՝ սեղմեց իր կրծքին...
Եւ իշխանուհու յոգնատանջ սրտից
Վիշտը փարատուեց, չքացաւ թախիծ...

LI

Գիւլիստան բերդի պարըսպի տակին,
Ծեռոտ, զառիվեր այն բարձր ճամբին,
Ամբոխը ժողուած իրար է անցնում,
Խռնւում յուզուած, բարձրը աղմկում.
Այնտեղ, վերևում՝ ամրոցի դռան,
Իսուփը կանգնած՝ դիւցազնի նման՝
Բաժնում էր ազգին յետ խլած ոսկին,
Վշտահար հային ըսփոփում կրկին...
Ամենքը քաջին փառաբանելով,
Թնդացնում էին շուրջը օրհնանքով։

LII

Ամբոխը դիւթուած ջահել մելիքից,
Դիւթուած, հմայուած նորա վեհ գործքից,

Ալեկոծւում է, յուզւում, բոբրաքւում,
Մելիք Թամրազին անվերջ անիծում։
Եւ ժողովրդի անէծքը դաժան
Լսում էր հեռուից Թամրազ անարժան,
Լսում էր — սոսկում իր ճակատագրից,
Սարսափում մռայլ, սև-սև մտքերից...
Օ՜, մթթէ անգութ փառքը Թամրազին
Շուտով պիտի տար հրաժեշտը վերջին...

LIII

Լեռների յետև, դաշտավայրում հարթ,
Որտեղ հոսում է Սև-ջուրը հանդարտ,
Կանգնած էր տխուր, իրրև սգաւոր,
Ղանլու-Չինարի [7]) ծառը դարաւոր.
Նորա հաստ ճիւղին, բարձր եթերում,
Նեխուած դիակ էր ճօճում, օրօրւում...
Նորա այլանդակ և ահեղ դէմքին
Մնացել էր սառած տանջանքը վերջին.
Քամին փչում էր, դիակը շարժում
Եւ հոտը զազիր շուրջը տարածում..

LIV

Մեռաւ չարանենգ Թամրազը դաժան,
Մեռաւ հայի զեղխ պետրն անարժան...

Կախուեցաւ ծառին ոչ թէ զղջումից,
Այլ քաջ Իսուսի արդար վրէժից [8])...

Վ Ե Ր Ջ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

[1]) Դեռ 1701 թուին Ղարաբաղի մելիքները դիմել էին Պետրոս Մեծին և խնդրել նորա հովանաւորութիւնը, որ կարողանային ապահով պատերազմելու թուրքերի դէմ։

[2]) Մելիք-Աբովը մեռաւ 1728 թուին, այն ժամանակ, երբ դեռ մելիքները սպասում էին Ռուսների օգնութեան։

[3]) Մելիք-Աբով II ունէր «Կաղ» մականունը. այդպէս էին կոչում, որովհետեւ նորա մի ոտը գնդակի հարուածից կաղ էր։

[4]) Մելիք-Աբովի այդ հրացանը, որ Մելիք-Բէգլարեանների ժառանգները հազար ռուբլով ծախեցին գեներալ Երմոլովին, այժմ գտնւում է Պետերբուրգի Արուժէյնի պալատում։

[5]) Ամենափրկիչ վանք, որ գտնւում է Գիւլիստանից երկու վերստ հեռու, մի անտառոտ ձորակում։

[6]) Յարձակման պայմանական նշանաբանն էր «ծկըտ», իսկ դադարմանը—«մկրտ»։

[7]) Ղանլու-Չինարը (=արիւնոտ չինարի) գտնւում է Գիւլիստանի և Ջրաբերդի սահմանի վերայ. այժմ մնացել են միայն նորա կոճղները։ Սորա մօտ է գտնւում Աղջաղալա գիւղը, որ կոչւում է նաեւ Ղարա-չինար (=Սեւ-չինարի)։

[8]) Իսուփը, յարձակուելով Թամրազի ապարանքի վերայ, մի քանի օր կռուելուց յետոյ, առնում է նորան և բռնում Թամրազին, որին անմիջապէս հրամայում է կախ տալ չինարի ծառից:

«Մելիք-Իսուփը» զրելիս, բացի իմ ճանապարհորդական յիշողութիւններից և այլ աղբիւրներից, օգտուել եմ նաեւ հետեւեալ աշխատութիւններից.

Բաֆֆի—«Խամսայի մելիքութիւններ»:

Գիւտ ա. ք. Աղանեան.—«Դիւան Հայոց Պատմութեան».

Г. Эзовъ.—«Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ.»

Հալայեան.—«Աղդադրական հանդէս».

Հեղինակ.

Հ.Հայաստան
1992

«Ազգային գրադարան»
NL0243321
«Ազգային գրադարան»
NL0243320
«Ազգային գրադարան»
NL0243319